ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գալուստ Անուշավանի Գալոյանի երեքքառորդդարյա կյանքը ազգին, հայրենիքին, հայրենի գիտությանը նվիրվածության վառ օրինակ է: Նրա իմաստալից կյանքը կոփվածք և սլացք ապրեց խորհրդային աշխարհում, մի աշխարհ, ուր հաստատված էին ազգերի իրավահավասարություն, ուր երաշխավորված էին սոցիալական լայն բարիքներից, մշակութային արժեքներից օգտվելու, գիտության բարձունքներին հասնելու լայն հնարավորություններ: Եվ իզուր չէ, որ Նրա գիտական ուսումնասիրություններում անդրադարձ գտան դրանց պատմաքննական իմաստավորման հարցերը:

Գ. Գալոյանը ծնվել է 1927 թ., ՀՍՍՀ Արթիկի շրջանի Պարնի (այժմ՝ Անուշավան) գյուղում, հայկական ավանդապահ ընտանիքում: 1950 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Գ. Գալոյանը 1948–1952 թթ. կատարել է կոմերիտական աշխատանք. եղել է ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կոմիտեի հրահանգիչ, պետհամալսարանի ԼԿԵՄ կոմիտեի և ՀԼԿԵՄ Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար, ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար:

1955 թ. Գ. Գալոյանն ավարտել է ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիան, նույն թվականից սկսվել է Նրա գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը: 1955–1958 թթ. Նա աշխատել է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում որպես ավագ գիտաշխատող, իսկ 1958–1963 թթ. որպես դիրեկտորի տեղակալ և բաժնի վարիչ: 1963 թ. Գալոյանին շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1964 թվականին

պրոֆեսորի կոչում: 1971 թ. ընտրվել է ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ ակադեմիկոս:

Գ. Գալոյանը 1963–1979 թթ. վարել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի, 1979–1982-ին՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս քարտուղարի, 1982–1988-ին, և ապա 1990–1994 թթ. ԳԱ փոխպրեզիդենտի պատասխանատու պաշտոնները: 1979 թվականից առ այսօր ԳԱԱ նախագահության անդամ է, 1994 թվականից՝ ԳԱԱ պրեզիդենտի խորհրդական, գիտահրատարակչական խորհրդի նախագահ:

Հարուստ է Գ. Գալոյանի հասարակական-քաղաքական գործունեությունը: Նա եղել է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր լենինյան և պետական մրցանակների կոմիտեի անդամ, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գիտության և տեխնիկայի բնագավառում պետական մրցանակների հանձնաժողովի անդամ և այդ հանձնաժողովի նախագահի տեղակալը: Գ. Գալոյանը Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի հիմնադիր անդամներից է, Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամ և Խաղաղության պաշտպանության հայկական հանրապետական կոմիտեի նախագահ: Նա մասնակցել և ելույթներ է ունեցել Խաղաղության պաշտպանությանը նվիրված միջազգային հանձնաժողովներում: Գ. Գալոյանը 1964 թվականից անընդմեջ ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի կազմում, իսկ 1989 թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր: 1988–1990 թթ. նա ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական աշխատանքների գծով քարտուղարն էր:

Գ. Գալոյանն արժանացել է բազում պարգևների. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով, Վավիլովի անվան և մի շարք այլ մեդալներով:

Ըստ արժանվույն գնահատելով Գ. Գալոյանի գիտական, գիտակազմակերպական և հասարակական-քաղաքական գործունեությունը, ՀՀ ԳԱԱ նախագահության հոբելյարին հղած շնորհավորագրում մասնավորապես ասված է.

«Սիրելի հոբելյար, Ձեր կյանքը նման է յուրատեսակ սլացքի՝ նպատակամետ ու հայրենանվեր խիզախումների ու նվաճումների: Պետական-հասարակական ականավոր գործիչ, մեծավաստակ գիտնական, տեսաբան-պատմաբան, գիտության կազմակերպիչ: Շուրջ 16 տարի գլխավորելով ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, այնուհետև վարելով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի, փոխպրեզիդենտի պաշտոնները՝ Դուք Ձեր անդնահատելի ներդրումն ունեցաք հայկական գիտության և հայ պատմագիտական մտքի զարգացման և գիտական կադրերի պատրաստման հայրենանվեր գործում: Մենք առանձնահատուկ հպարտությամբ ենք նշում համազգային նշանակություն ունեցող և Հայաստանի պետական մրցանակի արժանացած «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակը, որը ստեղծվեց Ձեր անմիջական ղեկավարությամբ և Ձեր անխոնջ եռանդի ու ջանքերի շնորհիվ»: Հիրավի, Գ. Գալոյանի ղեկավարությամբ է, որ առաջին անդամ հայոց պատմագրության մեջ ստեղծվեց ստվարածավալ հատորներից բաղկացած մի աշխատություն, ուր ժամանակի գիտության բարձրակետից շարադրվեց հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, որը խոշոր երևույթ

էր հայագիտության մեջ, մեր ժողովրդի գիտամշակութային և գիտաքաղաքական կյանքում:

Ջափագանց բեղմնավոր է Գ. Գալոյան գիտնականի գրիչը: Մեկ տասնյակից ավելի նրա աշխատությունները [«Պայքար Հայաստանում խորհրդային իշխանության համար» (ռուսերեն, Մոսկվա, 1957), «Մայիսյան հերոսական ապստամբությունը», «Սոցիալիստական հեղափոխությունն Անդրկովկասում բուրժուական պատմագրության լուսաբանմամբ» (ռուսերեն, Մոսկվա, 1960), «Պատմության քառուղիներում» (1982), «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» (ռուսերեն, Մոսկվա, 1976, Սոչի, 1978), «Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում 1900–1922 թթ.» (1969), «Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ», «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.» և այլն], պատմագիտական և հրապարակախոսական հարյուրավոր հոդվածները նվիրված են Անդրկովկասում և Հայաստանում հեղափոխական-բանվորական շարժումների և ազգային հարցի պատմությանը, Անդրկովկասի և Ռուսաստանի ժողովուրդների պատմական կապերին, բուրժուական պատմագրության քննադատությանը, Հայկական հարցի և հարակից այլևայլ հիմնախնդիրների լուսաբանությանը: Այսօր առավել քան արդիական հնչեղություն են ձեռք բերում Գ. Գալոյանի աշխատությունները, որոնցում աղբյուրագիտական հարուստ նյութերի հենքի վրա գիտականորեն հիմնավորված հերքվում են կեղծարարների կողմից լայնորեն քարոզվող հերյուրանքները այսպես կոչված «Զարիքի կայսրության» և նրանում «ստրկացված» ժողովուրդների մասին: Գ. Գալոյանի գիտական վաստակը անանց արժեք է մեկ այլ առումով ևս: Նրա աշխատությունները շարադրված են հայրենասիրության և Ռուսաստանի հետ մշտամնա բարեկամության ամուր դիրքերից, պատմության տրամադրած հարուստ փաստերով և կուռ տրամաբանությամբ հիմնավորված են հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, ռուս պետականության և ռուս ժողովրդի նկատմամբ ունեցած ավանդական հավատն ու սերը: Նրա ուսումնասիրություններում ցույց է տրվում, որ տառապանքի և հերոսական մաքառումների բազմադարյան ճանապարհ անցած հայ ժողովուրդը Ռուսաստանի օգնությամբ երկու անգամ փրկվեց ֆիզիկական կործանման հնարավոր վտանգից. առաջինը 1828 թ., երբ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, և երկրորդը 1920-ին, երբ նոր Ռուսաստանի հետ ամուր դաշինքով և Խորհրդային Միության կազմում սկսեց ապրել իր վերածնունդը:

Ուղիղ կես դար, իր գիտական գործունեության մեկնարկից սկսած մինչև օրս, Գ. Գալոյանի առաջադիր նպատակն է եղել ընթերցողին ներկայացնել հայ ժողովրդի ազատագրական պայքարի, նրա ռուսական կողմնորոշման ձևավորման, Անդրկովկասը և նրա մաս Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու, դրանից հետո Անդրկովկասի քրիստոնյա և ռուս ժողովուրդների դեմոկրատական ավանդույթների զարգացման պատմության հարցերը: Նրա աշխատությունները ռուս-անդրկովկասյան առնչություններն արտացոլող պատմաքննական լուրջ ուսումնասիրություններ են, ուր մեծ խստապահանջությամբ կարևորված են այն ակնառու

փաստերը, որոնք ի հայտ են բերում հայ ժողովրդի ազատագրական շարժման կապերը Ռուսաստանի հզորացման հետևանքով դեպի հարավ առաջխաղացման նրա ձգտումների հետ և հատկանշում շահերի երկուստեք աճող մերձեցումը:

Մեկնաբանելով արևելյան բռնատիրությունների ներքո անդրկովկասյան քրիստոնյա ժողովուրդների վիճակը, ազգային ու սոցիալական ծանր ճնշումներն ու հալածանքները, Գ. Գալոյանը լուսաբանել է սոցիալ-քաղաքական այն գործընթացները, որոնք պիտի նպաստեին հայերի և վրացիների ռուսական կողմնորոշման ամրակայմանը: Փաստերի և կատարված անցքերի անաչառ մեկնաբանությամբ Գ. Գալոյանի կողմից լուսաբանված են ռուս-անդրկովկասյան քաղաքական առնչություններին նախորդած պատմական հանգամանքներն ու զարգացման միտումները, բացահայտված են երկրամասում մեծ տերությունների բախվող շահերի այն հակամարտությունները, որոնք հատկապես խորանալով Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման իրողությամբ, սպառնում էին վերածվել մեծ բախումների: Գիտնականի աշխատություններում միաժամանակ քննադատաբար է ներկայացվել Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականությունը՝ այդ հենքի վրա գնահատելով գյուղացիական շարժումները, միաժամանակ ընդգծելով, որ երկրամասում ուժեղացող սոցիալական պայքարն աստիճանաբար միավորվում էր համառուսաստանյան սոցիալական և հեղափոխական-դեմոկրատական շարժմանը, դառնում նրա բաղկացուցիչ մասը: Պատմաբանը հանգամանորեն ներկայացրել է այն ազդակները, որոնք դրական ներգործություն ունեցան հայ ժողովրդի կյանքում մասնավորապես նրա մշակույթի և հասարակական-քաղաքական մտքի զարգացման վրա: Գ. Գալոյանը ընթերցողին է ներկայացրել հայ ժողովրդի դեմոկրատական մտքի և մշակույթի զարգացման գործում ռուսական առաջավոր մշակույթի և գրականության, դեմոկրատական մտքի բարերար ազդեցությունը, բնութագրել հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության հեռանկարը ռուս հեղափոխական դեմոկրատական շարժման հեռանկարի հետ շաղկապված:

Գ. Գալոյանի աշխատություններում դիպուկ է բնութագրված 1877–1878 թթ. ընթացքում Անդրկովկասում տիրող կացությունը, հետպատերազմյան ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքը, պատմականության գիրքերից գնահատված են քաղաքական հոսանքների և ազգային կուսակցությունների գործընթացները: Ակադեմիկոսի հրապարակումներում դիտական փաստարկումներով քննադատված են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի քաղաքականության երկդիմությունը, Փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված ժամանակավոր կառավարության և Անդրկովկասում նրա տեղական օրգան «Կովկասյան հատուկ կոմիտեի» (ՕԶԱԿՕՄ) հակաժողովրդական գործունեությունը, Անդրկովկասի ազգային կուսակցությունների Ռուսաստանից անջատվելու «պետական արկածախնդրությունը»:

Խորհրդային Միության փլուզման և հետխորհրդային տարիներին ՀՀՇ-ական պարագլուխների կազմակերպած հակառուսական արկածախնդրութ-

յունը (հակառուսական հիստերիան) մեկ անգամ ևս եկավ հաստատելու, թե որքան ճիշտ էր ըմբռնել ակադեմիկոս Գ. Գալոյանը «Հավերժ Ռուսաստանի հետ» կարգախոսի իմաստը և որքան ճիշտ կանխատեսել դրան ըդդիմադիր քաղաքականության ավերիչ հեռապատկերները:

Գիտական մեծ բարեխղճությամբ և արդիականության թելադրանքի շնչով է գրված Գ. Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.» արժեքավոր մենագրությունը (լույս է տեսել 1999-ին), որն իր նորովի եզրահանգումներով և ընդհանրացումներով հիմնահարցին նվիրված լավագույն ուսումնասիրություններից է՝ զերծ կողմնակալությունից և ամեն կարգի նեղմիտ կուսակցական շահախնդրությունից:

Գ. Գալոյան գիտնականի հրապարակումներում լուսաբանված հիմնահարցերը շատ են տարողունակ, և, բնականաբար, դրանց համապարփակ դնահատականը, ինչքան էլ ցանկանանք, չենք կարող տալ ներկա բնութագրական հոդվածի շրջանակներում: Ուստի մնում է վերջում հանրաճանաչ պատմաբանին, գիտության կազմակերպչին, հասարակական-քաղաքական գործչին, բուհերի երկարամյա դասախոսին, հայրենասեր քաղաքացուն և ազնիվ մարդուն՝ Գալուստ Գալոյանին, մաղթել հոգու արիություն, քաջառողջություն և ստեղծագործական երկարակեցություն:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ